

1

Որդին իր գծերը կարող է ժառանգել...

- A միայն հորից:
- B միայն մորից:
- C և՛ հորից և՛ մորից:
- D կա՛մ հորից, կա՛մ մորից, բայց ոչ երկուսից:

2

Նկարում ցուցադրված է մկների, օձերի և ցորենի համակեցություն:




Ի՞նչ կպատահի համակեցության հետ, եթե մարդիկ ոչնչացնեն օձերին:

3


Ո՞րն է մեկի փոխարեն երկու ականջ ունենալու առավելությունը:

4

Ներքևի նկարում գծիր լուսնի դիրքը, ցույց տալու համար, թե ինչպես է տեղի ունենում արևի խավարումը:



Արև



Երկիր

5

Որոշ քիմիական ռեակցիաներ էներգիա են կլանում, իսկ մյուսները՝ անջատում: Ածուխի այրման և հրավառության պայթեցման ռեակցիաներից որո՞ւն է էներգիա անջատվում:

- A միայն ածուխի այրման
- B միայն հրավառության պայթեցման
- C և՛ ածուխի այրման և՛ հրավառության պայթեցման
- D ո՛չ ածուխի այրման, ո՛չ հրավառության պայթեցման


6

Ո՞ր օրգանը որովայնում չէ:

- A լյարդ
- B երիկամ
- C ստամոքս
- D սիրտ

7

Ձսպանակներ 1-ը և 2-ը նույնանման են: Ձսպանակ 1-ը մի փոքր սեղմված է և անրացված: Ձսպանակ 2-ը ավելի շատ է սեղմված: Ո՞ր զսպանակը ավելի շատ կուտակված էներգիա ունի:



- A Ձսպանակ 1-ը
- B Ձսպանակ 2-ը
- C Երկու զսպանակներն ունեն միևնույն քանակությամբ կուտակված էներգիա
- D Հնարավոր չէ պարզել մինչև չիմացվի, թե ինչ նյութերից են պատրաստված

8

Անասունի գլխաքանակի չափից դուրս ավելացումը տեղանքում կարող է հանգեցնել լուրջ խնդրի: Ո՞րն է այդ խնդիրը:

- A ջրի սակավությունը
- B աղտոտման ավելացումը
- C հողի էրոզիան
- D օքսիդային անձրևները

9

Ո՞րն է արյան կարմիր գնդիկների հիմնական ֆունկցիան:

- A պայքարելը հիվանդությունների դեմ
- B մարմնի բոլոր մասերը թթվածնով ապահովելը
- C մարմնի բոլոր մասերից ածխաթթու գազի հեռացումը
- D արյան շրջվելը ապահովող նյութերի արտադրումը

10

Ի՞նչ կպատահի, եթե աթոռից հեռացվեն դրա բոլոր ատոմները:

- A Աթոռը կմնա, բայց կլինի ավելի թեթև:
- B Ոչ մի փոփոխություն չի լինի:
- C Աթոռից բան չի մնա:
- D Մի քիչ հեղուկ կմնա հատակին:

11

Նավթը չվերականգնվող բնական պաշարի օրինակ է: Հետևյալներից ո՞րն է չվերականգնվող բնական պաշարի օրինակ:

- A փայտ
- B ծովի ջուր
- C արևի լույս
- D ածուխ

12

Բեր մեկ հիմնավորում, թե ինչու Երկրի օզոնային շերտում առաջացած անցքը կարող է աղետալի լինել մարդկության համար:

13


Երբ մեխած մեխը հանվում է փայտե տախտակից, տաքանում է: Բացատրիր, թե ինչու:

14

Յուպիտեր մոլորակը լուսնից մեծ է, սակայն Երկրից նայելիս ավելի փոքր է երևում: Բացատրիր, թե ինչու:

15

Նկարում ցուցադրված է ապակյա պրիզմայի մեջ թափանցող լույսի ճառագայթ:



Նկարագրիր, թե ինչ կերևա էկրանին (կարող ես գծելով հիմնավորել պատասխանդ):

16

Ջետկյալ կենդանիներից ո՞րին են կատուները ամենամոտը:

- A կոկորդիլոս
- B կետ
- C գորտ
- D պինգվին

17

Չեռնայալներից ո՞րը խառնուրդ չէ:

- A մառախուղ
- B շաքար
- C կաթ
- D ներկ

18

Չեռնայալներից ո՞րն է քիմիական ռեակցիայի օրինակ:

- A Իրը փայլեցվում է առաջացնելով հարթ մակերես:
- B Նյութը տաքանալով գոլորշիանում է:
- C Դրսում մնալուց առարկայի վրա առաջանում է սպիտակ փոշի:
- D Նյութը ֆիլտրացիայի միջոցով առանձնացվում է խառնուրդից:

19

Ո՞ր պրոցեսն է մարմնամարզություն կատարելիս մարդու մարմինը պաշտպանում չափից դուրս շատ տաքանալուց:

20

Երկրի մթնոլորտում կան տարբեր գազեր՝ ածխաթթու գազ, ազոտ, թթվածին: Դասակարգիր դրանք ըստ քանակների՝ ամենաշատից դեպի ամենասակավը:

- A ազոտ, թթվածին ածխաթթու գազ
- B ազոտ, ածխաթթու գազ, թթվածին
- C թթվածին, ազոտ, ածխաթթու գազ
- D ածխաթթու գազ, թթվածին, ազոտ